

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

« 08 » 11 2023թ.

No 03/3-3/66622-2023

IRAVABAN.NET ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԽՄԲԱԳԻՐ
ՏԻԿԻՆ Ա. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՏԻԿԻՆ Զ. ՄԵԼՔՈՒՄՈՎԱՅԻՆ

Ի պատասխան Ձեր 28.10.2023թ. N32/01 գրության


Հարգելի տիկին Զիլինգարյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում «Շահութահարկի մասին» ՀՀ 1997 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքը, բացառությամբ այդ օրենքի 8-րդ և 11-րդ հոդվածների նախավերջին պարբերություններով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված ռեզիդենտներին վերաբերող դրույթների, որոնք գործում են հավաստագրի տրամադրման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:

Նույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-246-Ն օրենքը, բացառությամբ այդ օրենքի 10-րդ հոդվածի 1.1-ին մասով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկային գործակալներին վերաբերող դրույթների, որոնք գործում են հավաստագրի տրամադրման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև բացառությամբ նույն օրենքի 8.2-րդ հոդվածով նախատեսված դրույթների, որոնք շարունակում են գործել 2014 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում ստացված հիպոտեկային վարկերի մասով:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 11-րդ հոդվածներին համապատասխան՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված ռեզիդենտների կողմից հավաստագրի գործողության



ժամկետում տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից ստացվող եկամուտները չեն համարվում եկամուտ, իսկ դրանց ստացման հետ կապված ծախսերը չեն համարվում ծախս:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկային գործակալը հավաստագրի գործողության ժամկետում աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում է 10 տոկոս դրույքաչափով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ շահութահարկով հարկման բազան որոշելիս «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված ռեզիդենտների կողմից հավաստագրի գործողության ժամկետում տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից ստացվող եկամուտները չեն համարվում եկամուտ, իսկ դրանց ստացման հետ կապված ծախսերը չեն համարվում ծախս: Միաժամանակ, «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկային գործակալը հավաստագրի գործողության ժամկետում աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկում է 10 տոկոս դրույքաչափով՝ ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 20 տոկոս դրույքաչափի փոխարեն:

Հայտնում ենք նաև, որ «Շահութահարկի մասին» և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքների վերոնշյալ դրույթները գործում են «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրի տրամադրման օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հարկային արտոնությունների տրամադրման վերաբերյալ նախագիծ չի մշակվել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

11/7/2023

X 

ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատ.' ՎՄԸՎ հարկերի և պարտադիր վճարների
մեթոդաբանության թիվ 2 բաժին, հեռ. 060-844-646

